

ԿԼԷՆՏԷՅԼԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ
RONALD I. DE POMPA-ՅԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Երեքշաբթի, Փետրուար 22ին Կլենտյլի նորընտիր Ոստիկանապետ՝ Ronald I. De Pompa, ընկերակցութեամբ Կլենտյլի City Manager Տիար Արտաշէս Քացախեանի, իր ընտրութենէն ետք պաշտօնական առաջին այցելութիւնը տուաւ Առաջնորդարան եւ հանդիպում ունեցաւ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հետ:

Սոյն հանդիպման ներկայ էին Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Զոզ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտընեան, Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Ժոզէֆ Կանիմեան, Առաջնորդանիստ Սայր Տաճարի Շինութեան Յանձնախումբի Ատենապետ՝ Տիար Արմէն Դամբար եւ Տիկինը՝ Նորան, ինչպէս նաեւ Սայր Տաճարի Կնքահայրերէն Տիար Յարութ ճապարեան:

Մտերմիկ շրջանակի մէջ տեղի ունեցաւ ջերմ զրոյց: Սրբազան Դայրը շնորհաւորեց Ոստիկանապետին ընտրութիւնը եւ շեշտեց, թէ Առաջնորդարանի եւ Կլենտյլի Ոստականութեան միջեւ ստեղծուած փոխադարձ այցելութիւնները եւ համագործակցութիւնը պիտի շարունակուի: